

ՀԵԼԵՆԵ ՈՂԵՐԳՈՒԹԻՒՆ Ի ՀԻՆԳ ՀԱՆԴԵՍՍ

(Շար. տնո. թզմ. 1920, էջ 108)

ՀԱՆԴԵՍ ԶՈՐՐՈՐ

ՏԵՍԻՒ Ա.

(Աղբուղտաշատ ասպարանք)

ԱՐԴՈՒԱՐԴ (առանձին)

Ահա առաջին, այս երկրորդ անգամ Հայաստանի իմ ձեռքովս իմ գերութեան չղթալը կը խորտակէ. այս երկրորդ անգամ սա բազուկս զՎա. կիռնացիս յաղթելով, կոր ի գլուխ Հայաստանն կը հալածէ: Ամէն բերան «կեցցէ մեր հայրենեաց ազատիչն, կեցցէ՛ հայրն հայրենեաց» կը կանչէ. հայր... այո, խիստ թշուառ հայր մըն եմ ես: Սա ձեռքս հզօր և ահաւոր՝ օտարաց դէմ, բարերար և պաշտպան հայրենեացս, ինձ միայն տկար և ապերախտ կը գտնուի: Ո՛հ, ինչ դժբաղդ ճակատագիր. միթէ լաւագոյն չ'էր ինձ, եթէ Աղեքսանդրի ձեռքէն կարելէ՛ր՝ վահէին և այնչափ փաշաց հետ՝ պատերազմի դաշտին վրայ ննջէի: Ապրեցա՞յ ուրեմն, որ սա սե օրս տեսնեմ. օր երանաւէտ ամենեցուն, ինձ միայն մահաբեր: Այս օրուան յաղթութեամբս հայրենիքս կ'ազաւտեմ, իմ հարցն ազատութիւնը դարձեալ իրեն կը պարզեմ և անբաւական եմ պարեցընելու գործին: Դա զի և հայրենիք կը պահանջեն որ իւր ազատիչն որդին մտնի խաչատուակութեամբ՝ իբրեւ մատիչ և դաւաճան հայրենեաց: Ո՛, ապեւ, բախտ Հայաստան, այդպէս բարերարքդ կը վարձատրես. մէկ ձեռքովդ ճակատս մորտենեօք կը պսակեն, մինչդեռ միւսովդ որդւոյս մահը վճռելու կը պատրաստուիս. հայրը կը վարձատրես գորդին ի մահ դատապարտելով: Իսկ երբ որդիքդ այսօր խնդութեան տօն մը կը կատարեն, կը պահանջեն որ իրենք ուրախութեան հեղինակն միայն հեծէ: Արդուարդայ սիրտէն միայն ուրեմն հառաչանք և ողբ պիտի բղթին: Արտաւազդ չղթայակապ իւր մահուանը կը սպասէ, իսկ հայրն ալ հոս պալատիս մէջ իւր բազուկն անիւծելով գերեզման մը կը փնտռէ: Միթէ մինչև հիմայ հայրենեացս համար թափած արիւնն չի՞ պիտի կարենայ գնել որդւոյս քանի որ կամ իլ արիւնը. եթէ երիտասարդ տարիքն, եթէ սէրն անգամ մը զինքն մոլորեցուց, կրնայ իւր յանցանքը քանի պատերազմի դաշտին վրայ մեռնելով հայրենեացն համար... Ո՛հ, մի տարակուսիք, իմ որդիք է Արտաւազը, նա զի շատ անգամ դու ալ փորձն առած ես, ո՛ւ Հայաստան: Սկզբնայն այդ մահն անհանդուրժելի է. չ'եմ գիտեր մինչև որ աստիճան հայրենասիրութիւնս այդ նախաւտալից ապերախութեան պիտի համբերէ. այլ

կ'զգամ որ սրտիս խորէն ձայն մը ծերակուտին խտութեան դէմ կը բողբոջ և որդւոյս պաշտպանութեան դիմելու զիս կը գրգռէ: Բոլորովին հայրենասէր ըլլալու համար միթէ պէ՛տէ է որ որդեսպան ըլլամ այսօր...: Ի՛նչ կ'ըսեմ... Ես որ ի ծնընդէնս ի վեր հայրենեացս նուիրած եմ կեանքս, բազուկս, կամքս, մինչև հոգիս ալ, միթէ կրնամ Հայաստանի առջև վտարանջութեան օրինակ մը տալ. միթէ կրնամ տեղեկացաւուց պաշտպանել մատնիչ դաւաճան մը... սա... կայն ինչ էր իւր յանցանքն, Հայաստանի ազաւտութեան համար միթէ հանրի էր Հելէնէի մահն... Հելէնէ՛ գոր, կ'ըսէր, ի՛նչ կեանքն աւելի սիրած էր, Հելէնէ՛... Արտաւազը...

ՏԵՍԻՒ Բ.

ԱՐԴՈՒԱՐԴ, ՀԵԼԵՆԵ

ՀԵԼԵՆԵ (ծայտեալ գիճուորակն զգեստով, սուրբ մէքը և սաղաւարտ ի գլուխն յամրաքայլ հերս կը մտնայ)

ԱՐԴՈՒԱՐԴ

Ո՛հ ես դու, յանդուգն երիտասարդ, որ առանց մասնաւոր հրամանիս հոս կը մօտենաս: (մեկուսի) կարծեմ ճանչնալ սա դէմքը:

ՀԵԼԵՆԵ

Ի՛նչ, միթէ այդչափ քիչ միջոց բաւեց ուրեմն մոռցընել տալ քեզ, ի պոլիկուց ի վեր քովդ մեծցած և որդւոյդ հետ մանձ Հելէնէն:

ԱՐԴՈՒԱՐԴ

Հելէնէ՛... օ՛վ դիք... (խոյս տալ կը խնդրի)

ՀԵԼԵՆԵ

Կեցիր, տէր իշխան. ինչ, միթէ տկար օրիորդի մը առջև խո՞յս պիտի տաս դու, որ քիչ մ'առաջ սուր ի ձեռին հոս կատաղութեամբ վազեցիր. որպէս զի հօբս և իմ հոգիս ալ մօրս ստուերին միացընես...

ԱՐԴՈՒԱՐԴ

Ապա ի՛նչ կը խնդրես ինձմէ:

ՀԵԼԵՆԵ

Ապահով եղիր, տէր իշխան. մի՛ կարծեր որ սա սուրն վրէժխնդրութեան համար մէջքես կախուած է, ո՛չ. թէ և իրաւունք ունենամ զայն թաթխելու մօրս դաւաճանին արեան մէջ, սա... կայն անհնար է ինձ ծակել Արտաւազդայ հօրն սիրտը. իսկ և ոչ զայս իմ. պաշտպանութեան համար պիտի գործածեմ, մի՛նչդեռ կենացս լոյսն կիսով չափ խաւարած է. երբ հայրս իւր կենաց վրայ կը դողայ, և երբ Արտաւազը իւր մահուան վճռոյն բանտին մէջ կ'սպասէ: Ապա սա երկաթը որդւոյդ և ինձ համար կը պահեմ. իրեն պիտի

ընծայեմ սա սուրբը, երբ տեսնեմ որ խայտառակ մահուանէն ազատելու ալ յոյս և հնարք չ'ունի. իսկ վերջը իւր արեամբն ծխող երկաթը ի սիրտ իմ դարձընելով...

ԱՐԴՈՒԱՐԿ

Քայց գուցէ ժամանակ չի պիտի ունենաս, որ այդ խորհուրդդ կատարես. վասն զի դու ալ արդէն դատապարտուած ես, թշուառ օրիորդ... ո՞վ դիք, եթէ մէկն յանկարծ գրեզ հոս տեսնէ, վերջինն օրը հասած է... զի բոլոր գործութեամբս ալ գրեզ կարող չ'եմ պաշտպանելու... այլ և ի՞նչ կը պահանջես, միթէ կ'ուզես որ ես ալ Հայաստանի առջև մատնիչ և դաւաճան երեւամ... իսկ դու ալ ի՞նչպէս հոս մօտենալու կը յանդգնիս. հայրենապետեաց և մատնիչ չ'ըլլալու համար քու արիւնդ ալ թփափուէ բռնադատուած եմ, թէ՛ պէտէ զիտեմ որ անմեղ ես դու. չըլտեցիր որ քու պատճառաւ չառն որդիս պիտի մեռնի. հայրենեացս սրբոյն համար իրեն ալ չ'եմ խնայեր. գուցէ քու արիւնդ կրնայ ազատել իւր կենալը:

ՀԱՅԿԵ

Ուրեմն ինչո՞ւ կը դանդաղիս, մեղացուր զիս որպէս զի Արտաւազդ ապրի. զայս կը փափաքեմ ես և զայս կը պահանջեմ յանուն քու հայրենասիրութեանդ. ընաւ փոյթդ չ'ըլլայ իմ մահու. կը կարծես որ Արտաւազդ մեռնելէն վերջը՝ կ'ապրի՞ Հելէնէ... մեր երկուքին հոգին ալ մի է. մէկ շունչ, մէկ կենսւք ու ունիւք, իրարու համար միայն կ'ապրէինք: Այսօր կը թողուս, հայր անգութ, որ որդիդ զրկուի իւր արեւէն. իսկ արդ ի՞նչ կ'ընենք քեզ, իւր մահու և իմ գերեզմանս պիտի փորէ, ուր հայրս ալ իմ ետեւն պիտի իջնայ: Խնդաւ ապա, ուրախ լել, զի հայրենասէր և անգութ մնալովդ փափաքեցի ալ կը հասնիս, այդպէս միանգամայն փնացընելով թէ՛ Նշուպտող, մշտի և թէ՛ քու ճեղքը: Ահ, կը հարցընես ինձ թէ ի՞նչ գործի համար հոս եկած եմ, լսե՛ ուրեմն. Ապաստանիս խորէն ելնելով գրեզ կը փնտռէի, ինչ իշխան, որպէս զի Արտաւազդ ազատելու միջոց մը գտնանք. սա ծպտեալ զգեստովս, առանց կասկած մ'ալ տալու, անցայ մեր դահճաց մէջէն, ու հոս մօտենալուս լսեցի քու հատալանքդ և ողբդ: Կարծեցի որ վերջապէս հայրական սիրտդ կը ճմլէր մեր վշտաց վրայ, կարծեցի թէ որդիդ ազատելու դու ալ կը փափաքէիր, ուստի վա՛զեցի խնդութեամբ սրտի գրեզ աղաչելու, որ անապարես ժամանակ չըկրտնցընելով... սա, կայն կը տեսնեմ որ խաբուած եմ. զի գրեզ աւելի անգութ և անողորմելի կը գտնամ: Ի՞նչ ահաւոր հայրենասիրութիւն, որ սրտիդ մէջ ամէն զգացումը մինչև զբնութիւնն անգամ մեղցընելով, կը պահանջէ՛ որ խաղաղ աչք տեսնես որդւոյդ նախատալից մահը: Քայց ինչո՞ւ օտար ձեռքով կը յանձնես այդ փափուկ և փառաւոր պաշտօնը. միթէ չ'ես ըլլար աւելի եռանդնոտ հայրենասէր, եթէ դու անձամբ իրեն դահճի ըլլաս. ի՞նչ, միթէ տապալար պիտի դողալորդ՞ սա ձեռքդ որ մինչև հիմայ զինքն շղթայով և գզուելով մեծ-

ցուցին. սա ձեռքդ որ զինքն չրթանցդ մօտեցընելով բիւր համբոյրնիւրով ծածկած ես, սա ձեռքդ որով զինքն դէպ ի յերկինս բարձրացընելով, երկար կենալք և երջանիկ ապագայ մը իրեն մաղթած ես...

ԱՐԴՈՒԱՐԿ

Ահ, ինչե՛ր կը յիշեցրես... փախիր, Հելէնէ, փախիր, թող զիս առանձին. սրտիս բուռն վըշտացն վրայ մի աւելցընիր և գլուսահատութիւն... Ահ, եթէ մէյմը սրտիս խորին մէջ իջնայիր... սակայն անգոր եմ ես, զինքն ի ձեռն հայրենեաց և օրինաց յանձնած եմ: Փախիր Հելէնէ, մի բռնադատիր զիս, որ ակամայ եղեռնագործ ըլլամ. կը կրկնեմ քեզ, եթէ մէկն գրեզ հոս տեսնէ, ամէն զգացումը և գուցէ լոնցընելով, պարտաւորուած եմ փնացընելու, ինչպէս որ ըսիր, Նշուպտողմշտի ճեղք: զայս խոստացայ ծերակուտին, զայս և՛ դից երդուընցայ:

ՀԱՅԿԵ

Այ՞դ է ուրեմն վերջին պատասխանդ:

ԱՐԴՈՒԱՐԿ

Ի՞նչ կը խնդրես որ ընեմ. գտիր ինձ զինքն պատուով ազատելու միջոց մը, առ այս ես ալ կը յօժարեմ, ես ալ կը փափաքեմ:

ՀԱՅԿԵ

Ես ունիմ այդ միջոցը:

ԱՐԴՈՒԱՐԿ

Ի՞նչ, դու ունիս այդ միջոցը... ահ, ըսէ՛ շուտ, կենալք դարձեալ ինձ կը պարգևես:

ՀԱՅԿԵ

Չափաւորե՛ խնդութիւնդ, տէ՛ր իշխան, անաւսիկ. (սուրբ ցուցրնելով) չ'ես յիշեր, որ քեզ ըսի, թէ երբ իւր մահը անհրաժեշտ տեսնեմ, սա սուրբ իրեն պիտի ընծայէի. այո՛, սա երկաթը զինքն խայտառակ մահուցէ մը պիտի ազատէ, երբ անգոր է հայրն. սա երկաթն պատուաւոր մահ մը իրեն պիտի տայ, եթէ ոչ փառաւոր. իսկ նոյն հայրուան զիս, զինքն և հայրս գերեզմանի մէջ պիտի իջեցընէ, ի գերեւ հանելով ծերակուտին տալու վճիռը... Բայց իրեանդ գոյն կը նեւե՛...

ԱՐԴՈՒԱՐԿ

Ահ... ուրեմն դու զինքն պիտի տեսնես այսօր... սակայն Արտաւազդ բանտի մէջ է:

ՀԱՅԿԵ

Այո՛, զինքն պիտի տեսնեմ... սակայն և չ'եմ ծածկեր քնէ մեր ապաստանը. տնտի՞ զգուշութիւն, վասն զի այժմ մահն է ի ձեռս մեր, այլ և ապրելու բնաւ անորոշ չ'ունիմք, երբ մեր ազատիչն ի մահ պիտի մատուցուի: Դու ալ գիտես

կնոջը չիբոմին մօտ Հայոց Թագաւորաց ստոր, երկրեայ գերեզմանքն, որ և զարդոյնն անցքով մը պալատիս բանտերուն հետ հաղորդակցու թիւն ունին...

ԱՐՌՈՒԱՐԻ

Արեմն, գերեզմանաց մէջ պահուելտած էք:

ՀԵՆՆԷ

Ի՞նչ կը խնդրես, ձեր հարց գերեզմանքն զմեզ պաշտպանեցին, երբ իրենց որդիքն զմեզ կը հալածէին. ուստի հոն ծերակուտին որոշմանն սկիտի սպասեաք. նա զի և պահապանքն մեր կողմնն են. իթէ ծերակոյտն Արտաւազգայ մահը վճռէ...

ԱՐՌՈՒԱՐԻ

Կը հասկընամ միտքը... ո՞վ դէք... Հեյնէն, սուր ինձ սա երկաթը. սա սուրն բոլոր Մա-կեդոնացոց բանակէն, զոր յաղթեցի այսօր, անաւոր է ինձ ի ձեռս քո.

ՀԵՆՆԷ

Անկարելի է... Եթէ զիս բռնադատես, զայն իմ արեամբս ներկուած պիտի առնուս. իսկ յայնժամ Արտաւազգ ալ իւր գլուխը շղթայիցն վրայ փշրելով՝ իւր կենաքը պիտի վճարէ. քու շահէ՞ զմեզ իրարմէ զրկելը միայն պիտի ըլլայ: Այլ և ինչու, միթէ ընտրեալդն չ'է՞ որ Արտաւազգ բանտին մէջ զինքն սպաննէ, առանց որ հրապարակական խաչատարութեան նշանակն ըլլայ... Բայց կը հասկընամ միտքդ, անգոնթ. կը փափաքիս որ Հայաստան այսօր զքեզ մատնանին ջուրընելով ըսէ՞. «Այն Հայ մը, որ և իւր որդուին չընկալեաք, այլ մի՛ խաբարիս, պիտի զրկեմ զքեզ այդ փառաբանութենէ: Ասկայն տէր իշխան, այդ սնուրի փառքն ի բաց թողով, իշխի մէջմը սրտիդ մէջ, մտածէ՛ թէ արզարն չ'ես ըլլար դահիճ անմեղաց, դահիճ և որդւոյդ... (պահ մը շուշարիւն. խորուարդ մտաւտանը. Հեյնէն շարունակելով). Ո՛հ, ո՛չ. հայր չ'ես դու, փուճ տեղ կը խօսիմ: (անկնկնոշ շարժմունք կ'ընէ)

ԱՐՌՈՒԱՐԻ (գիմքը արգիլելով)

Ա՛հ, կեցի՛ր օրիորդ... քու խօսքդ սրտիս զաղտնիքը բռնի կը խնէ. կը հաւատն որ այն պիտի անգութ հայր մ'ըլլամ, մինչև յօժարիմ իրաւող և անկարելիս որ աչօք տեսնել որդւոյն նախատախից մահը. այն տապալին որ իւր կենաց թելը կտրելու կը պատրաստուի, Հեյնէն, նոյն հարուածով իմ կենաքս ալ պիտի կտրէ: Ա՛հ, հայրենեացս համար այսօր պատերազմելով, բիւր անգամ զմահ քովս կանչեցի. բիւր անգամ Մակեդոնացոց փաղանգներուն մէջ նետուելով մահս խնդրեցի. աւաղ, դէք առաւել եմ անգութք քան զծերակոյտն, առէ՛նք զմահ հալածելով՝ զիս արանգործին, որպէս զի սա սեւ օրս տեսնեն: Այո՛, Հեյնէն, այսօր մահս անձկանք և բոլորով սրտիւ մաղթեցի, և զոր ուրիշներուն իբրև պա-տիճ կու տայի, չըկցեալ իբրև շնորհ յերկնից

ընդունել: Իսկ այժմ որ բովանդակ քաղաքն յաղթութեանն նաւակաւորքը կը կատարէ, և ազա-տութիւնը խնդութեամբ կը սոնէ, գիտե՛ս, օրիորդ, ի՞նչ գործի համար ես հոս առանձին կը թա-փառիմ, անաւ ըսեմ քեզ. ես հոս գերեզման մը կը փնտռեմ: Արդարեւ, Արիաթէս իմ կողմանէս կը ջանայ համոզելու զծերակոյտն, որ այդ վճիռը խափանէ, սակայն չ'եմ գիտեր որչափ կրնամ վստահիլ և յուսալ: Որիորդ, կը յօժարիս դու ծառայութիւն մ'ինձ ընելու:

ՀԵՆՆԷ

Ի՞նչ տեսեալ ծառայութիւն, տէ՛ր իշխան:

ԱՐՌՈՒԱՐԻ

Ստոյգ բտիր երէկ, թէ ես տասը տարի առաջ քու մայրդ սպանեցի:

ՀԵՆՆԷ

Աւաղ...

ԱՐՌՈՒԱՐԻ

Իս և՛ երեկ զիներ սուր ի ձեռի՛ն ի խուց քո վազեցի, որպէս զի հայրդ սպանեմ, զոր կատնեմ, զքեզ ալ, անմեղ օրիորդ, զոր կը սիրեմ: Կը տեսնես որ հրէջ մը եմ ես. իսկ այժմ հոս վրէժխնդիր ձեռք մը կը փնտռեմ, որպէս զի զիս ալ ստակեցրնէ: Կ'ուզեն, Հեյնէն, մօրդ վրէժը հանել ինձմէ, ազատել հայրդ. զքեզ և զսիրականդ միանգամայն, անաւասիկ եմ, զարկ, մի՛ վախեր, չի պիտի պաշտպանեմ զիս, այլ խաղաղ կ'սպա-սեմ. վարդ՝ սա սուրդ ճիշդ սրտիս մէջ, խա-ւարեցուր աշացս սա արեւը, իսկ ես ձեռքդ պիտի օրհնեմ:

ՀԵՆՆԷ

Ի՞նչ, տէ՛ր իշխան, Ի՞նչ ինձմէ կը պահանջես, միեւ ձեռքս Արտաւազգայ հօրն արեան մէջ... տէ՛ր իմ, ես խեղճ օրիորդ մըն եմ. իմ սիրելիներս ազատելու համար տկար արտօնուածք միայն կրնամ գործածել. իսկ վրէժս առնուլ համար ներել միայն գիտեմ... այլ և զիս չ'եմ խաբեր... դո՛ւ ալ ուրեմն, քու սիրտդ ալ ապա կը մտաւորնջէ այն խիստ հրամանին դէմ... Ա՛հ կրկնէ՛ ինձ տէ՛ր իշխան, բոլորովին բռնաւոր և անգութ չ'ես դու ապա... կը յիշեն վերջապէս, թէ հայր ես, թէ որդի մը ունիս, արզարեւ որդւոյ թշուառ ուղարկն, որ զքեզ իւր բանտին մէջ օրհնելով՝ իւր մահուանն կ'սպասէ. անմեղ որդի մը, զոր այս օր խայտառակութեամբ պիտի սպաննես... Բայց խօսէ՛...

ԱՐՌՈՒԱՐԻ

Լո՛ւ, ինչացնոր օրիորդ. մի՛ բարձրացընէր ձայնը, կը մոռնաս թէ՛ ուր ես... անաւասիկ ուրք հոս կը մօտենան. Արիաթէս ըլլաւ ու. տեսնենք ինչ լուր կը բերէ ծերակոյտն... դու առ այժմ մտի՛ր սա սննձկիս մէջ... վերջը քեզ կը կանչեն:

ՀԵԼԷՆԷ (սենեակի մոտենալու ատեն)

Ո՛վ դիմ, դուք զինքն պաշտպանեցէ՛ք: (կ'մոտայ)

ՏԵՍԻԼ Գ.

ԱՐԴՈՒԱՐԻ, ԵՒ ԱՊԱ ԱՐԻԱԹԷՍ

ԱՐԴՈՒԱՐԻ (մեկոտսի) .

Այո՛, իրաւունք ունի Հելենը, այո՛, անգուժ և անազորոյն հայր մըն եմ ես, կամ զոնէ զիս այդպէս կը կարծեն: Ա՛հ, թշուառ Արդուարդ, այդպէս զգեց կը ճանչնան: Արտաւազդ որդի իմ, եթէ հայրենեացն սէրն քու ոտիդ չ'ըլլար, այսօր քու դատաւորդ, քու մահդ վճռող վազրերն, քենէ առաջ գերեզմանի փոսին մէջ կ'իջնային և այսօր սա ձեռքս զԱրմաւիր բոցերու մատներով՝ իրենց անգործ խարոյկ մը կը կազմէին: (Արդուարդ կ'մոտենայ.) Արդուարդ բարձր Արիաթէս, ի՛նչպէս մեկնեմ այդ ուշ դարձդ, միթէ անետաքէր լուր մը, թէ մահացու հալուած մը հետզ կը բերես, արդէն թշուառու թեամբ վշտաբեկ հօր մը սրտին:

ԱՐԻԱԹԷՍ

Աւագ, տէր իշխան, կ'ստիպուիմ հետզ միատեղ հառաչելու:

ԱՐԴՈՒԱՐԻ

Կը սոսկամ... միթէ ձերակոյտն կը զլանայ ինձ այդ շնորհքը... պատասխանէ՛ շուտ, մէկէն կ'ուզեմ չափել վշտացս անդունդը:

ԱՐԻԱԹԷՍ

Դերակոյտն, տէր իշխան, կարող չ'է շնորհել դաւաճան մատնի մը կենալը, առ այս և օրէնք կը հակառակին. ի վերայ այսր ամենայնի քու ծառայութեանցդ իբրև վարձք, իրեն ներելու համար թոյլ կուտայ, որ Արտաւազդ զինքն արդարացնէ՛ գնելով իւր յանցանքը:

ԱՐԴՈՒԱՐԻ

Գնելով իւր յանցանքը... ի՛նչպէս... մեկնէ՛ միտքդ:

ԱՐԻԱԹԷՍ

Դերակոյտն, որպէս զի Արտաւազդ ապրի, պայման մը կ'առաջարկէ:

ԱՐԴՈՒԱՐԻ

Ի՛նչպիսի՞ պայման:

ԱՐԻԱԹԷՍ

Բոլոր Հայաստան և մասնաւորապէս ձերակոյտն այսօր ստոյգ գիտէ, թէ Նոպոտղոմէոս և Հելենէ հոս սա պալատիս մէջ պահուրտած

են. իւր խուզարկութիւնն մինչև հիմայ անօգուտ եղաւ: Արտաւազդ գիտէ անշուշտ անոնց զաղտնի ապաստանը. ուրեմն ձերակոյտն ի շնորհս քո զիջանելով. կը պահանջէ որ իւր մատնիչ չ'ըլլալը հայրենեաց ապացոյցանելու համար, սա Մակեդոնացոյց մէկը յանձնէ ի ձեռս իւր. մէկը միայն, իսկ զընտրութիւնն իրեն կը թողու: Ուստի թէ որ Արտաւազդ յանձն առնու և խոստանայ մինչև ի վաղիկ մատնել զՆոպոտղոմէոս և կամ զՀելենէ, պիտի ապրի. ապա թէ ոչ, այսօր, զիջեր չ'հղած, իւր գլուխն հրապարակաւ պիտի խնայ:

ԱՐԴՈՒԱՐԻ

Ինչպիսի՞ խիստ և դժողակ պայման, կրկին մատնութեամբ մը զնէ՛ իւր առաջին մատնու թիւնը... զայս կը պահանջէ, բարձր, ծերակոյտն, այնպէս չ'է՛... աչդափ վատ կը կարծէ ուրեմն Արդուարդայ որդին... հայրենիք ալ ազատ են այսօր, ի՛նչ հարկ դարձեալ արիւն թափելու... դարձեալ արիւն, դարձեալ մատնութիւն մը... երբէք: Իս կը ճանչնամ զԱրտաւազդ և զիսեմ ալ որ բնաւ յանձն չի պիտի առնու այդպիսի պայման մը:

ԱՐԻԱԹԷՍ

Ջայս ես ալ յառաջագոյն կը գուշակէի և ասոր համար անա՛հոս գալուս զգնէ՛ յուսահատած էի իւր փրկութենէն: Սակայն կարծեմ ալ որ ձերակոյտին պայմանն բոլորովին անարդար պահանջ մը չ'է և Արտաւազդ կրնայ զայն կատարել առանց արատելու իւր և քու պատիւի:

ԱՐԴՈՒԱՐԻ

Ի՛նչպէս...

ԱՐԻԱԹԷՍ

Վասն զի Արտաւազդ անտարակոյս զՀելենէ, իւր սրտին սիրած օրիորդը, ազատելով, անոր վրիժապարտ հայրը պիտի մատնէ, զոր Հայաստան կ'ստնէ, զոր և դու կը դատապարտես. իսկ Հելենէ անմեղ է, զոր դու ալ կը սիրես, և անպարտ ըլլալուն Հայաստան ալ կը վկայէ: Դերակոյտն՝ զընտրութիւն որդւոյդ թողով, անշուշտ կը փափաքի չքապիժել անմեղ և միողապարտին հետ: Այլ և, տէր իշխան, եթէ սրտիդ ձայնին լսելով, որ ի պաշտպանութիւն որդւոյդ կը խօսի, եթէ դու ալ զինքն բռնադատելի կատարելու ձերականութիւն պահանջմունքը, մատնելով ի ձեռս հայրենեաց իւր անաւոր թշնամին...

ԱՐԴՈՒԱՐԻ

Եւ՛, մի՛ երկրորդը ըսածդ... բայց դու Հայ չ'ես, ապա զքեզ չ'եմ մեղադրեր. այլ լսէ՛ զիս, կ'ստնէ՛ զՆոպոտղոմէոս, կ'ուզեմ ալ որ մեռնի, այլ գիտեմ նաև որ Արտաւազդ յանձն չի պիտի առնու մատնել Հելենէի հայրը. ի՛նչ, ես գիցեմ առ այս բռնադատեմ... քու մի՛ լիցի. այլ և եթէ ինքն յօժարի, ես կը հակառակիմ:

ինձ մատչելի մը կենանք պէտք չ'է. յայնժամ իմ ձեռքս պիտի փութայ բառնալու երկրիս վրայէն այնպիսի հրէշ մը: Գուցէ ներքի էր իւր առաջին մատուցիւնն, որովհետեւ սիրելոյն կեանքը պիտի ազատէր. սակայն այդպիսի վատութիւն մը ի գործ դնել, մահաւընէ խոյս տալու նպատակաւ, երբէք ներքի: Գարձնալ ստոյգ եմ, որ Արտաւազը այդ պայմանաւ ստանալու կեանքը կ'արհամարհէ և կը մերժէ... ապա ընտրելագոյն է իւր մահն... թող մտնեմ:

ԱՐԻԱՐԻՍ

Կը խաբուիմ արդեօք, տէր իշխան, թերեւս սխալ լսեցի. վասն զի եթէ հաւտամ լսածիս, կարծեմ որ դու ալ զՆոպտոյոմէոս կը պաշտպանես, մինչև կը նախադասես որդւոյդ մահը... ինձ չ'է պատշաճ ըսածիդ վրայ զքեզ անդրադարձնել և կամ հայրենասիրութեան դաս տալ Արտաւազոյ. վասն զի քու համարուք աշխարհածածնոթ է. սակայն զԱրտաւազը զոհել, որպէս զի թշնամիդ պաշտպանես... այդ անհաւատելի էր: Ի՞նչ պիտի ըսէ այսօր չայտատան և Կապադովկիայ քու դաշնակիցը... իսկ սա ձեռքդ զոր մինչև հիմայ հայրենեացդ թշնամիքը հալածելու և պատժելու գործածեցիր, սա ձեռքդ որ այսօր ազատութեան դրօշակը բարձրացուց, հիմայ զերենք իւր պաշտպանութեան տակ պիտի առնու: Մտածէ՛ որ Նոպտոյոմէոսի կեանքի վնասակար է չայտատանի, և թէ քեզի զէմ յազնցրելու մասնաւոր ոխ մ'ունի. նաև յիշէ՛ զի եթէ Արտաւազը այսօր մեռնի, իրեն զաւաճան և մատնիչ պիտի սեպուի, իսկ իւր արիւնքն ժայթքած կաթիլներն, մինչև քու հազատող պնդող դափնիները պիտի արտատեն: Կը հաւանի՞ս որ այն յաղթական կամարին վրայ, զոր հայրենիք քու յիշատակիդ համար պիտի կանգնեն, մեծագործութեանցդ հետ և այդ տկարութիւնդ դրոշմուի, անեղծանելի՛ յիշատակ ապագայ դարուց: Նա զի և այդ գործովդ կ'ըլլաս նախ հայրենատեաց և միանգամայն հայր անգութ: Կը կրկնեմ քեզ, տէր իշխան, ազատէ՛ որդւոյդ կեանքը մասնելով ապարիւն սա Մակեդոնացիին, որ երկէջ դիշեր ընդհանուր կոտորածէն ապրեցաւ... չ'ես պատասխաներ:

ԱՐՊՈՒԱՐԻ

Ահ, ինչէ՛ր կը յիշեցնես...

ԱՐԻԱՐԻՍ

Որոշէ՛ միտքդ, տէր իշխան, ծերակոյտն անհամբեր քու պատասխանիդ կ'սպասէ. այդ պատասխանն կամ որդւոյդ փրկութիւն և կամ իւր դատապարտութեան վճիռը պիտի տայ:

ԱՐՊՈՒԱՐԻ

Գնա՛ ըսէ ծերակոյտին, թէ Արտաւազը մեռնելու պատրաստ է:

(Շարունակելի)

ՍԵՊՈՒՆ ՄԻՆԱՍՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ԸՍՏ 4. Ե.

(Շար. տես 1920 թգմ. էջ 111)

ՎԼԻԿԱԿ ԲՈՍՈՒՆՈՒ

Արդ Բոսուհու խաբայեացւոց Եգիպտոսէ ելլելն կը ղնէ 1491ին և Սողոմոնի գահը բարձրանալը 1015ին, որուն թագաւորութեան չորրորդ տարին տաճարի շինութիւնը կը սկսի, զոր կը ղնէ 1011ին (Իբօք այս թիւս հինգերորդ տարին կ'ըլլայ: Արդ խնդիր է չորրորդ տարի ըսելով լրացնալ տարի հասկընալու է՝ թէ երեք տարի լրացնալ, և ըստ այս հաշուոյ Եգիպտոսէ ելլելէն մինչև տաճարի շինութիւնը 480 տարի կ'ըլլայ, այսպէս յայտնի կը տեսնուի՝ թէ Եբրայական ժամանակագրութեան կը հետեւի: Բայց տեսանք մենք թէ Եբրայական ժամանակագրութիւնը կը սկսի Մովսիսի 40որդ տարիէն, ուրեմն եթէ Բոսուհու ղնէ Մովսիսի ծննդեանն մինչև ելլից Թուականը 40տարի, ըսել է թէ ինքն բոլորովին համաձայն կ'ընթանայ Եբրայական ժամանակագրութեան:

Բոսուհու Մովսիսի ծնունդը դրած է 1572ին և Ելքը 1491ին արդ տարբերութիւնն երկու թուոց է 80 տարի. ուրեմն Բոսուհու Մովսիսի ծննդեան ժամանակագրութեան մէջ երկուսնայնից կը հետեւի. վասնզի ինչպէս վերի յօդուածին մէջ յիշատակեցի, ասոնք են որ կը սկսին ազատութեան շրջանը Մովսիսի ութսուններորդ տարիէն: Արդ որովհետև Բոսուհու ուզեր է երկու սորազան ժամանակագրներն ևս զոհացնել՝ ինկեր է ծուղակի մը մէջ յայտնապէս: Վասն զի եթէ Մովսիսի ութսուններորդ տարին ուզէր ղնել, ինչպէս դրած է, պէտք էր այն աստեան 440 տարի ղնել Ելքէն մինչև տաճարի շինութիւնը. իսկ եթէ ուզէր 480 տարին ընդունել, այն աստեան Ելքէն յեգիպտոսէ պէտք էր ղնել 40 տարի աւելի առաջ 1531ին որ ճիշդ Մովսիսի 40ներորդ տարւոյն կը համապատասխանէ: Այս չափ Բոսուհուի համար: